ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
4	«Անբասիր ծառայության համար»-«Անբասիր ծառայության համար» մեդալն իրենից ներկայացնում է 50 մմ երկարությամբ դեպի եզրերը լայնացող հավասարակողմ էմալապատ խաչ, որի կենտրոնում մուգ կապույտ էմալ է և թևերի լայնությունը նվազագույնը 8 մմ է, իսկ առավելագույնը՝ 27 մմ: Մեդալը պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածից: Մեդալի հիմնական գույնն ոսկեգույնն է: Խաչի կենտրոնում տեղակայված է 37x18 չափերի կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը վահանի տեսքով, որի մեջտեղում պատկերված է առյուծը, որը ունի գլխավերևում կորանձև եզերված Հայաստանի Հանրապետության եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն էմալներով և վահանի կենտրոնով ուղղահայաց անցնում է 37մմ երկարությամբ սուրը: Վահանի ներքևի հատվածում կորանձև ժապավենի վրա գրված են «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» բառերը: Մեդալի դարձերեսին առկա է «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» հորիզոնական եռատող ռելիեֆային ուռուցիկ գրառումը, իսկ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալը կապօղակի միջոցով միացված է մետաղյա հնգանկյուն կախիչին, որի միջոցով մեդալը՝ ասեղային ամրկի օգնությամբ ամրանում է համազգեստին: Հնգանկյուն կախիչի ամենալայն մասը 44.5-ից 46.2 մմ է, ամենաբարձր մասը՝ 48-ից 51 մմ: Կախիչը պաստառված է 23.5-ից 24.5 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով 2մմ հեռավորության վրա անցնում են՝ 2 հատ 4 մմ լայնությամբ դեղին զոլակ: Յուրաքանչյուր մեդալ պետք է դրված լինի համապատասխան տուփի մեջ /160X110X32մմ/:Առավել մանրամասն կից ֆայլում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
4	